Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 26 -ի N 853 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԶՈՐԱՑ ՔԱՐԵՐ» ԲՆԱԿԱՏԵՂԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոցը (այսուհետ՝ արգելոց) ստեղծվում է «Զորաց քարեր» հուշարձանախմբի հատուկ ուսումնասիրման և պահպանական պայմանակարգի (ռեժիմի) սահմանման անհրաժեշտությամբ պայմանավորված, ինչը հնարավորություն կտա նաև ապահովել հուշարձանախմբի հնարավորինս անաղարտ պահպանությունը և դրա նպատակային օգտագործումը։ Արգելոցը գտնվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի վարչական տարածքում։

2. Արգելոցի ստեղծման նպատակներն են՝

1) հուշարձանի բնապատմական միջավայրի պատմամշակութային հողերի և դրանց հարող տեղանքապատկերների (լանդշաֆտների) հնարավորինս անաղարտ պահպանումը.

2) «Զորաց քարեր» բնակատեղի» հնագիտական հուշարձանից հայտնաբերված և այդ հուշարձանին վերաբերող մշակութային արժեքների պահպանումը, ուսումնասիրումը, ինչպես նաև նպատակային օգտագործումը.

3) գիտաճանաչողական զբոսաշրջության զարգացման նախադրյալների ստեղծումը և բնակչության մշակութային ժառանգության նկատմամբ հարգանքի ձևավորումը։

3. Արգելոցի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոց

հայերեն կրճատ՝ «Զորաց քարեր» արգելոց

ռուսերեն՝ ԼՐՑՏՐՌՍՏ-ՍցսՖՑցՐվօռ ջՈտՏՉպՊվՌՍ «կՏրպսպվՌպ ԻՏՐՈՓ ՍՈՐպՐ»

ռուսերեն կրճատ՝ ԻՈտՏՉպՊվՌՍ «ԻՏՐՈՓ ՍՈՐպՐ»

անգլերեն լրիվ՝ Historical and cultural preservaition of «Zorats karer settlement»

անգլերեն կրճատ՝ Preservaition of «Zorats karer»

II. ԱՐԳԵԼՈՑԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԸ (ՌԵԺԻՄԸ)

4. Արգելոցի տարածքում արգելվում է՝

1) տնտեսական և բնակելի օբյեկտների շինարարությունն ու շահագործումը, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և հաղորդակցության այլ ուղիների շինարարությունը՝ բացառությամբ արգելոցի գործունեության համար անհրաժեշտ օբյեկտների շինարարության.

2) մեքենայացված տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը՝ թույլատրված ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատես-ված վայրերում.

3) երկրաբանահետախուզական աշխատանքները, որոնք ուղեկցվում են փորձնական հանույթներով, մակաբացումներով, պայթեցումներով և բնապատմական միջավայրը խախտող այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ.

4) օգտակար հանածոների մշակումը, հանքաշերտերի, հանքաելուստների և լեռ-նատեսակների ելքերի շահագործումը.

5) բույսերի, ծաղիկների ու սերմերի մթերումը, անասունների արածեցումը, բուսածածկի այլ խախտումներ.

6) թունաքիմիկատների օգտագործումը.

7) ցանկացած այլ գործունեություն, որը խախտում, աղճատում, նսեմացնում է արգելոցի բնապատմական համակարգերը, հնագիտական հուշարձանները կամ սպառնում գիտական և (կամ) մշակութային արժեքի պահպանությանը։

5. Մուտքն արգելոցի տարածք թույլատրվում է՝

1) գիտահետազոտական աշխատանքների կատարման, ինչպես նաև արգելոցի գործունեության հետ կապված այցելությունների.

2) կանոնակարգված, գիտաճանաչողական զբոսաշրջության համար։

III. ԱՐԳԵԼՈՑԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6. Արգելոցի պահպանությունը, ուսումնասիրությունը, օգտագործումը և հանրահռչակումն իրականացնում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոց» մասնաճյուղը։

7. Արգելոցի տարածքում գտնվող հուշարձաններին և դրանց բնապատմական միջավայրին առնչվող աշխատանքները համաձայնեցվում են պետական լիազոր մարմնի հետ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ